ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցում»

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Սույն նախագծով նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցում՝ մակերևութային և մթնոլորտային ջրերի կազմակերպված հեռացման նպատակով:

Նախագծով նախատեսվում է ջրահեռացման բաց առվի կառուցում մետաղական կիսախողովակից՝ Ø530մմ ՊԿ 0+00 - ՊԿ 1+28 հատվածում, ընդհանուր 128.0 մետր երկարությամբ:

Նախագծվող համակարգի նպատակը բնակավայրի տարածքում ջրակուտակումների կանխումն է, ճանապարհային ծածկույթի և հարակից տարածքների պաշտպանությունը մակերևութային ջրերի բացասական ազդեցությունից, ինչպես նաև տարածքի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավումը:

Նախագծային լուծումները մշակվել են պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների, տեղանքի ուսումնասիրության նյութերի և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ

Նախագիծը մշակվել է գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան, այդ թվում՝

ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,

ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,

ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպում»,

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք,

գործող ԳՕՍՏ-եր երկաթբետոնե արտադրատեսակների, բետոնի և շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ:

3. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Ջրահեռացման համակարգը նախատեսվում է իրականացնել բաց տիպի ջրահեռացման առվի տեսքով՝ մետաղական կիսախողովակի՝ Ø530մմ կիրառմամբ:

Մետաղական կիսախողովակների տեղադրումը նախատեսվում է նախագծային նիշերին համապատասխան՝ ինքնահոս ջրահեռացման ապահովման նպատակով: Առվի ընդհանուր երկարությունը կազմում է՝ L = 128.0 մ:

4. ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հողային աշխատանքները կատարվում են գործող շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով փորվածքների կայունությունը և աշխատանքի անվտանգության պահանջները:

Առվի փորման, հատակի հարթեցման և հիմքի նախապատրաստման աշխատանքները կատարվում են մեխանիզացված և ձեռքի եղանակների համակցմամբ:

Մետաղական կիսախողովակների տեղադրումից առաջ հիմքը պետք է խտացվի և հարթեցվի՝ բացառելով հետագա նստեցումները:

5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Նախագծով նախատեսվում է կիրառել հետևյալ հիմնական նյութերը՝

մետաղական կիսախողովակներ,

B20 և ավելի դասի բետոն,

մանրացված քար և ավազ՝ հիմքերի պատրաստման համար,

հիդրոիզոլյացիոն նյութեր՝ անհրաժեշտության դեպքում:

Կիրառվող նյութերը պետք է համապատասխանեն գործող պետական ստանդարտների և ունենան համապատասխանության հավաստագրեր:

6. ՇԻՆԱՐԱԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 պահանջների:

Աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է՝

ապահովել երթևեկության անվտանգ կազմակերպում,

բացառել տարածքի ջրալցումը,

ապահովել շինարարական աղբի ժամանակին հեռացումը,

բացառել գործող ենթակառուցվածքների վնասումը:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Շինարարության ընթացքում պետք է պահպանվեն աշխատանքի անվտանգության նորմերը և շրջակա միջավայրի պահպանության պահանջները:

Արգելվում է շինարարական թափոնների անկանոն տեղադրումը, հողային զանգվածների անկառավարելի կուտակումը և տարածքի աղտոտումը:

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախագծով նախատեսված ջրահեռացման համակարգի իրականացումը հնարավորություն կտա ապահովել մակերևութային ջրերի անվտանգ հեռացումը, նվազեցնել ջրակուտակումների առաջացումը և բարելավել Սարուխան բնակավայրի տարածքի ինժեներական վիճակը:

Սույն նախագծային լուծումները համապատասխանում են գործող նորմատիվատեխնիկական պահանջներին և կարող են ընդունվել հետագա շինարարական աշխատանքների իրականացման համար:

Աշխատանքային գծագրերի հիմնական լրակազմի ամփոփագիր

Թերթ	Անվանումը	թերթերի համարը	թերթերի քանակը
1	ԲԱՑԱՏՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ	ԱԿ-1	5
2	Արտաքին ջրահեռացման աշխատանքների ծավալներ	ԱԿ-2	5
3	ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Կ2-Ի ՑԱՆՑՈՎ ՊԿ 0+00-ԻՑ ՊԿ 1+28	ԱԿ-3	5
4	Ջրահեռացման երկայնական կտրվացք ՊԿ0+00-ԻՑ ՊԿ1+28	ԱԿ-4	5
5	Էլեմենտների ծավալների ցանկ	ԱԿ-5	5

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐՏԱՔԻՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ:
2. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՁԵՌՔՈՎ:

			Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ			
Տնօրեն	Վ. Աղդայան					
			ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ	Փուլ	Թերթ	Թերթեր
Նախագծեց	Վ.Ավագյան			ԱՆ	1	5
			ԲԱՑԱՏՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ	<<ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ>> ՍՊԸ ՔՊԼ 000572		

Արտաքին ջրամատակարարման աշխատանքների ծավալներ

№	Անվանումը / Наименование	Չափման միավոր / Ед. измер.	Քանակը / Кол-во	Ծանոթություն / Примечание
1	2	3	4	5
1	Մետաղական կիսախողովակի ապամոնտաժում	գծմ	11,5	
2	Պողպատե խողովակի ապամոնտաժում	գծմ	5,5	
3	Ազբեստե խողովակի ապամոնտաժում	գծմ	16,0	
4	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատորով, կողալիցքով	$մ^3$	107,52	
5	Բետոնե հենարանի իրականացում	$մ^3$	0,352	
6	Ավազակոպճային շերտ h = 10սմ	$մ^3$	8,96	
7	Մետաղական կիսախողովակի մոնտաժում Ø530մմ(կիսախողովակ պատվիրատուի կողմից տրամադրվող)	գծմ	113	
8	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում	$մ^3$	1,5	
9	Երկշերտ ծալքավոր խողովակ SN6 Ø400 մմ	գծմ	15	
10	Ավազի պաշևպանիչ շերտի իրականացում	$մ^3$	3	
11	Խրամուղու ետլիցք կողալիցքի գրունտներից, ձեռքով	$մ^3$	25,6	
12	Ավելցուկային գրունտների բարձում ա/մ և տեղափոխում 5.0կմ	$մ^3$	81,92	
13	Ասֆալտի ծածկույթի կտրում	գծմ	10,5	
14	Ջրքմեկուսացում բիտումի մաստիկով երկշերտ	$մ^2$	188,8	
15	Հակակոռոզոին գրունտ	կգ	56,445	
16	Հակակոռոզոին ներկ	կգ	56,445	

Տնօրեն	Վ. Աղդայյան		Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ		
Նախագծեց	Վ.Ավագյան		ՋՐԱՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ	Փուլ	Թերթ	Թերթեր
				ԱՆ	2	5
			Արտաքին ջրահեռացման աշխատանքների ծավալներ	<<ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ>> ՍՊԸ ՔՊԼ 000572		

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Կ2-Ի ՑԱՆՑՈՎ ՊԿ 0+00-ԻՑ ՊԿ 1+28



			Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ			
Տնօրեն	Վ. Աղդալյան					
Նախագծեց	Վ.Ավագյան		ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ	Փուլ	Թերթ	Թերթեր
				ԱՆ	3	5
			ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Կ2-Ի ՑԱՆՑՈՎ ՊԿ 0+00-ԻՑ ՊԿ 1+28	<<ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ>> ՍՊԸ ՔՊԼ 000572		

Ջրահեռացման երկայնական կտրվածք ՊԿ0+00-ից ՊԿ1+28



ՆՇԱՀԱՐՈՒՄ / ПИКЕТ ОТМЕТКИ	ՀՈՂԻ ՆԻՇԸ / ОТМЕТКА ЗЕМЛИ	ԽՈՂՈՎԱԿԻ ՏԱԿԻ ՆԻՇԸ / ОТМЕТКА ПОД ТРУБОЙ	ԽՈՂՈՎԱԿԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ / ГЛУБИНА ЗАЛОЖЕНИЯ ТРУБ	ՀԱՏԱԿԱԳԻԾ / ПЛАН
Պկ 0+0,00	1987.96	1987.56	0.80	
Պկ 0+6,00	1987.98	1987.48	0.80	Անկ.1 α=172˚
Պկ 0+20,00	1987.75	1987.35	0.80	
Պկ 0+34,00	1987.35	1986.95	0.80	1
Պկ 0+38,00	1987.24	1986.84	0.80	Անկ.2 α=175˚
Պկ 0+49,00	1986.71	1986.31	0.80	2
Պկ 0+55,00	1986.51	1986.11	0.80	
Պկ 0+71,00	1986.12	1985.72	0.80	
Պկ 0+79,00	1985.88	1985.48	0.80	
Պկ 0+94,00	1984.84	1984.44	0.80	Անկ.3 α=168˚
Պկ 1+6,00	1984.08	1983.68	0.80	
Պկ 1+14,00	1983.67	1983.27	0.80	Անկ.4 α=167˚
Պկ 1+28,00	1982.86	1982.46	0.80	

Հատված	ԹԵՔՈՒԹՅՈՒՆ / УКЛОН	ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ / РАССТОЯНИЕ
0+0,00 – 0+6,00	0,013	6
0+6,00 – 0+20,00	0,009	14
0+20,00 – 0+34,00	0,028	14
0+34,00 – 0+38,00	0,028	4
0+38,00 – 0+49,00	0,048	11
0+49,00 – 0+55,00	0,033	6
0+55,00 – 0+71,00	0,0326	15
0+71,00 – 0+79,00	0,03	8
0+79,00 – 0+94,00	0,069	15
0+94,00 – 1+6,00	0,063	12
1+6,00 – 1+14,00	0,051	8
1+14,00 – 1+28,00	0,05	14

ՀԱՏԱԿԱԳԻԾ / ПЛАН: Կ2, ՆԿ1+00

ԽՈՂՈՎԱԿԻ ՏՐԱՄԱԳԻԾ / ДИАМЕТР ТРУБ:
- 0+0,00 – 0+34,00: Պողպատե կիսախողովակ Ø530 մմ **ԳՕՍՏ 10704-91**
- 0+34,00 – 0+49,00: Երկշերտ ծալքավոր խողովակ SN6 Մ400 մմ
- 0+71,00 – 1+28,00: Պողպատե կիսախողովակ Ø530 մմ **ԳՕՍՏ 10704-91**

ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ / ИЗОЛЯЦИЯ

ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵՍԱԿ / ТИП УКЛАДКИ: ՎԵՐԳԵՏՆՅԱ

Տնօրեն	Վ. Աղդայան	
Նախագծեց	Վ.Ավագյան	

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Փուլ	Թերթ	Թերթեր
ԱՆ	4	5

Ջրահեռացման երկայնական կտրվածք ՊԿ0+00-ից ՊԿ1+28

<<ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ>> ՍՊԸ
ՔՊԼ 000572

ԴԻՐՔ	Ն Շ Ա Ն Ա Կ ՈՒ Մ Ը	Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը	ՔԱՆ. հատ	ՄԻԱՎ. ՔԱՇԸ ԿԳ	ԾԱՆՈԹ. ԿԳ
		ՀԱՎԱՔՈՎԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ			
1	**ԳՈՍ Ր** 54475-2011	Երկշերտ ծալքավոր խողովակ SN6 Ø400 մմ L= 6000	2.5	51	127,5
2	**ԳՈՍ 10704-91**	Պողպատե կիսախողովակ Ø530 մմ L= 12000	9.5	469,86	4463,67
3		Հակակոռոզային գրունտ	0.3 **կգ**	188,15**մ**2	56,445**կգ**
4		Հակակոռոզեն ներկ	0.3 **կգ**	188,15**մ**2	56,445**կգ**
5		**Բետոնե հենարան**	2	0,176	0,352

Տնօրեն	Վ. Աղդայան		Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան բնակավայրում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ			
Նախագծեց	Վ.Ավագյան		ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ և ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ	Փուլ	Թերթ	Թերթեր
				ԱՆ	5	5
			Էլեմենտների ծավալների ցանկ	<<ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ>> ՍՊԸ ՔՊL 000572		